ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

ԿԱՐԻԵՐԱՅԻ ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ՓՈՐՁԸ ԵՎ ԴՐԱ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅԱՆ ԵԶՐԵՐԸ ՀՀ ԲՈՒՀԵՐՈՒՄ

ՀԱԿՈԲՅԱՆ Լ. Տ.

Կարիերայի ուղղորդման ռեսուրսները և ծառայությունները Հայաստանում համեմատաբար նոր երևույթ են և ձևավորման փուլում են: Արևմուտքում արդեն կայացած այս կառույցները արդյունավետ գործիք են դարձել նորավարտ շրջանավարտների կարիերայի ուղին մշակելու և համապատասխան խորհրդատվություններ տրամադրելու հարցում: Ուստի այս ոլորտի կայացման համար անհրաժեշտ է ուսումնասիրել միջազգային լավագույն փորձը և համեմատելով ՀՀ բուհերում գործունեություն ծավալող համապատասխան կառույցների հետ՝ փորձել տեղայնացնել և գտնել կարիերայի ուղղորդման ծառայությունների «հայկական մոդելը»:

Որպես մեթոդաբանություն՝ ուսումնասիրության համար հիմք է ծառայել «Վեբոմետրիքս» («Webometrics Ranking of World Universities») հեղինակավոր բուհական վարկանշային համակարգի հրապարակած լավագույն բուհերի ցանկը: «Վեբոմետրիքսը» համարվում է «Կիբերմետրիքս Լէբ» իսպանական հետազոտական կազմակերպության նախաձեռնությունը, որը նշանակալից դեր ունի գիտության և տեխնիկայի տարբեր հետազոտությունների կազմակերպման ոլորտում[1]: Այս ընտրության հարցում կարևորվեց հատկապես այն հանգամանքը, որ, ի տարբերություն հուսալի այլ համակարգերի («Շանհայ», «Թայմս», «QS»), «Վեբոմետրիքսն» ունի համապատասխան ցուցանիշներ, որոնք առնչվում են ինչպես Հայաստանի, այնպես էլ տարածաշրջանի այլ բուհերին:

Ուսումնասիրությունն իրականացվել է բուհերի պաշտոնական կայքէջերի օգնությամբ՝ թեմատիկ շեշտադրումներ անելով ներքոնշյալ ուղղությունների վրա.

- *ուսանողներին և շրջանավարտներին տրամադրվող կարիերայի ուղղորդման ծառայություններ,*
- *բուհ-ձեռնարկություն համագործակցության դրսևորումներ,*
- *կարիերայի աշխատանքների կազմակերպման էլեկտրոնային գործիքներ:*

Այսպիսով, ուսումնասիրվող առաջին բուհը ԱՄՆ-ի ամենահին բարձրագույն կրթական հաստատությունն է՝ Հարվարդի համալսարանը (1636 թ.), որը, վարկանշման մեր ընտրած համակարգի 2016 թ. ցուցանիշների համաձայն, առաջա-

[1] http://www.webometrics.info/en/Contact_Us (19.05.2016)

տարն է ինչպես ԱՄՆ բուհերի, այնպես էլ վարկանշման ենթարկված աշխարհի 22.000 բուհերի շրջանում: Բուհի կարիերայի համակարգման հարցերով զբաղվում է Կարիերայի ծառայությունների գրասենյակը (Office of Career Services)[2]: Գրասենյակի շահառուներն են Հարվարդի ուսանողները և նորավարտ շրջանավարտները: Ինչպես արդեն նշեցինք, ուսումնասիրվող թեմայի ուղղություններից մեկը Գրասենյակի կողմից մատուցվող ծառայություններն են (աշխատանքի և ինթերնշիփի[3] հնարավորությունների ընձեռում, խորհրդատվությունների կազմակերպում, որակավորման բարձրացմանը միտված հետբուհական կրթության հնարավորությունների մասին տեղեկատվության տրամադրում, մասնագիտական տարբեր ոլորտներում արդեն կայացած շրջանավարտների հետ անմիջական կապի հաստատում, հանդիպում-քննարկումների կազմակերպում և այլն): Այս ուղղությամբ Հարվարդը բավական խորքային մոտեցում է ցուցաբերում: Մինչև աշխատանքի կամ ինթերնշիփի հնարավորության ընձեռումն իրականացվում են մի շարք խորհրդատվական միջոցառումներ՝ ուղղված ուսանողների՝ գործատուին ճիշտ ներկայանալու հմտությունների ձևավորմանը և աշխատաշուկայում մրցունակության բարձրացմանը: Այսպես՝ իրականացվում են կարիերայի պլանավորում և ժամանակացույցի մշակում, որը ենթադրում է ինքնաբացահայտող, սեփական հնարավորությունները գնահատող և մի շարք հմտություններ զարգացնող ծրագրերի և միջոցառումների կազմակեր-պում: Այս փուլի տրամաբանական շարունակությունը համարվում է CV, Rezume, Cover Letter կազմելու վերաբերյալ դասընթացների կազմակերպումը, որին էլ հաջորդում է սոցիալական կապերի հաստատման փուլը: Գրասենյակը սոցիալական կապերի հաստատման համար շահառուներին առաջարկում է մասնակցել մասնագիտական դասընթացների, աշխատանքային տոնավաճառների, «Շրջանավարտների խորհրդատուների»[4] էլեկտրոնային հարթակում կազմակերպվող հարցազրույցների և այլն: Սոցիալական կապերի հաստատումը հնարավորություն է ընձեռում ծանոթանալու ինչպես ոլորտի կադրային մարտահրավերներին, այնպես էլ մասնագիտական թափուր հաստիքների և ինթերնշիփերի հնարավորություններին: Դրանց շահառուները կարող են տեղեկանալ Հարվարդի Քրիմսոն Քարիերս (Crimson Careers) հարթակում, որը նախատեսված է միայն Հարվարդի ուսանողների և նորավարտ շրջանավարտների համար[5]: Գրասենյակը տեղեկատվություն է տրամադրում նաև

---

[2] http://ocs.fas.harvard.edu/interviewing (24.05.2016)

[3] **Ինթերնշիփ (internship)**՝ թարգմանվում է որպես աշխատանքային կամ մասնագիտական պրակտիկա, որն անցկացվում է աշխատավայրում՝ բուհի, քոլեջի ուսանողների կամ շրջանավարտ մեծահասակների մասնագիտական և աշխատանքային կարողությունների զարգացման նպատակով: Այն կարող է լինել վճարովի կամ առանց վարձատրության:

[4] https://harvardocs.evisors.com/(24.05.2016)

[5] https://harvard-csm.symplicity.com/students/ (24.05.2016)

կարիերայի զարգացմանը նպաստող հնարավորությունների հարցում որոշումներ կայացնելու (decision making) հմտությունների վերաբերյալ:

Հարվարդի Կարիերայի ծառայությունների գրասենյակի աշխատանքներում հսկայական դերակատարություն ունեն էլեկտրոնային ռեսուրսները, որոնք թերևս առանձին ուսումնասիրության նյութ են, բայց և այնպես որոշ մանրամաս-ների ներկայացումը հետաքրքրական է հատկապես հետագայում հայկական տարբերակի մշակման համատեքստում: Այսպես՝ գրասենյակի էլեկտրոնային պորտալում ներգրավված են մասնագիտական մի շարք էլեկտրոնային ռեսուրսներ, ներառյալ՝ ինքնաբացահայտման, CV կազմելու, հարցազրույցին մասնակցելու, սոցիալական կապեր հաստատելու, թափուր հաստիքներին և ինթերնշիփերին առնչվող տեղեկատվությանը ծանոթանալու գործիքներ: Մասնավորապես արդյունավետ գործիք է նաև արդեն հիշատակված «Շրջանավարտների խորհրդատուների» էլեկտրոնային հարթակը, որտեղ գրանցված է Հարվարդի շուրջ 400 շրջանավարտ: Հարթակում գրանցումը հնարավորություն է ընձեռում անմիջական կապ հաստատելու աշխատաշուկայում արդեն կայացած շրջանավարտի հետ, ծանոթանալու համապատասխան ոլորտի պահանջներին, խորհուրդներ ստանալու գործատուին պատշաճ ներկայանալու նրբությունների վերաբերյալ և այլն: Կարելի է փաստել, որ Գրասենյակի առաջնային գործառույթներից է նշված աշխատանքային գործիքների և դրանց արդյունավետ կիրառման վերաբերյալ շահառուների շրջանում տեղեկատվության տրամադրումը:

Ձեռնարկությունների և հնարավոր գործատուների հետ Գրասենյակի համագործակցության առումով ուշագրավ է, որ փոխգործակցությունը տեղի է ունենում ֆինանսական հիմունքներով, և այս դեպքում վճարողը հենց գործատուն է: Համագործակցության շրջանակներում գործատուները կարող են Crimson Careers էլեկտրոնային հարթակում տեղադրել տեղեկատվություն թափուր հաստիքի և ինթերնշիփի վերաբերյալ, ընդ որում՝ հասարակական կազմակերպություններն ունեն հարթակ մուտք գործելու անվճար հնարավորություն, իսկ շահույթ հետապնդող կազմակերպությունները պարտավոր են վճարել 30 եվրո՝ հարթակում իրենց տեղադրած նյութը երկու ամիս ցուցադրելու համար: Համագործակցության շրջանակներում կազմակերպվում են նաև աշխատանքային տոնավաճառներ, որոնց մասնակցության համար շահույթ հետապնդող կազմակերպությունները վճարում են 800, իսկ հասարակական կազմակերպությունները՝ 100 եվրո: Վճարովի հիմունքներով են կազմակերպվում նաև հարցազրույցները, և որքան էլ որ մեր իրականության համար զարմանալի է, գործատուները հարցազրույցների ընթացքում միմյանց հետ մրցակցում են պատրաստված և բարձր որակավորում ունեցող մասնագետ գտնելու համար: Բուհ-ձեռնարկություն համագործակցության հարցում, արդարև, մեծ նշանակություն ունեն բուհի հեղինակությունն ու պատրաստած մասնագետների բարձր

որակավորումը: Նորելյան 47 մրցանակակիր-շրջանավարտ ունեցող բուհի մասնագետները բնականաբար բարձր պահանջարկ ունեն աշխատաշուկայում, որն էլ այդ համագործակցության նման բարձր մակարդակի դրսևորման գրավականն է:

Հաջորդ բուհը, որին ուզում ենք անդրադառնալ, անգլիախոս աշխարհի հնագույն կրթական օջախ հանդիսացող Օքսֆորդի համալսարանն է: «Վերոմետրիքսի» ցուցանիշներով այն առաջատարն է ԵՄ տարածքում: Համալսարանի կարիերայի ծառայությունները, ինչպես և ենթադրվում էր, բազմակողմանի են և թիրախավորված են ինչպես շրջանավարտների, այնպես էլ ուսանողների ուղղությամբ: Ծառայությունների հիմքում ընկած են մասնագիտական, վարչարարական և գործնական հմտությունների զարգացմանը, ինչպես նաև ապագա մասնագետների մրցունա-կության բարձրացմանը միտված միջոցառումներ: Ինչպես Հարվարդի, այնպես էլ Օքսֆորդի օրինակով կարող ենք ծանոթանալ էլեկտրոնային արդյունավետ աշխատանքային գործիքների, որոնք մի կողմից պարզեցնում են կարիերայի ծառայությունների մատուցումը, մյուս կողմից էլ ներկայացվող տեղեկատվությունը հասանելի դարձնում շահառուների, այսինքն՝ ուսանողների, շրջանավարտների և գործընկեր կազմակերպությունների շրջանում: Այսպես՝ Կարիերայի ծառայությունների պաշտոնական կայքէջում գործում է Քարիեր Քոննեկտ (Career Connect) բաժինը, որտեղ մուտքի իրավունք ունեն միայն բուհի ուսանողներն ու շրջանավարտները, ինչպես նաև գործընկեր կազմակերպությունները: Այստեղ տրամադրվում է տեղեկատվություն ինթերնշիփերի, մենթորինգի[6] և թափուր աշխատանքային հաստիքների վերաբերյալ: Կարիերայի ծառայությունների ուղղությունների մեջ կարևոր տեղ են զբաղեցնում խորհրդատվությունների և ինթերնշիփերի կազմակերպումը: Դրա համար գործում են առանձին էլեկտրոնային էջեր: Այսպես, խորհրդատվություններն իրականացնում են համապատասխան որակավորում ունեցող անձինք, որոնք ուսումնասիրում են ուսանողների ինքնակենսագրությունը (CV) կամ ուղեկցող նամակները (cover letters), կատարում համապատասխան ուղղումներ, տրամադրում տեղեկատվություն հետաքրքրող ոլորտի կամ մասնագիտական ուղու զարգացման վերաբերյալ, օգնում պատշաճ պատրաստվել հարցազրույցներին և այլն:

---

[6] ***Մենթորինգը*** *(հունարեն նշանակում է հանդուրժել, տոկալ) սահմանվում է որպես փորձառու և անփորձ անձանց միջև կայուն հարաբերություն, երբ շարունակական ներգրավման միջոցով փորձառու անձը/մասնագետը երիտասարդին առաջարկում է աջակցություն, ուղղորդում օգնություն՝ վերջինիս կյանքի այնպիսի մի բարդ փուլում, երբ նա առնչվում է նոր մարտահրավերների ու աշխատում շտկել նախկին սխալները:*

Անդրադառնալով ինթերնշիփերին, նշենք, որ Կարիերայի ծառայությունների բաժնում գործում է նաև Ինթերնշիփի գրասենյակ, որը հիմնվել է 2012 թ. և կազմակերպում է հետևյալ հիմնական ծրագրերը.

- ***Օքսֆորդի համալսարանի ինթերնշիփի ծրագիր.*** *Ծրագրի շրջանակներում բազմաթիվ ինթերնշիփեր են կազմակերպվում ինչպես Միացյալ Թագավորությունում, այնպես էլ երկրի սահմաններից դուրս: Ինթերնշիփերը հասանելի են բացառապես Օքսֆորդի ուսանողների համար և տևում են 4-12 շաբաթ:*
- ***Միկրոինթերնշիփի ծրագիր.*** *Ծրագիրն իրականացվում է Միացյալ Թագավորության տարածքում և տևում է 2-5 օր: Նման ծրագրին մասնակցող ուսանողները ներգրավվում են նախագծերի մշակման աշխատանքներում և պրակտիկորեն ծանոթանում որոշ մասնագիտական նրբությունների:*
- ***Մորից-Հեյման ինթերնշիփ ծրագիր.*** *Ծրագիրը նախատեսված է Մորից-Հեյման կրթաթոշակից օգտվող ուսանողների համար և կարող է ունենալ մինչև 3 ամիս տևողություն:*
- ***Դոկտորական ինթերնշիփ ծրագիր.*** *Ծրագիրը նախատեսված է միայն PHD ուսանողների համար և կարող է իրականացվել տարվա յուրաքանչյուր ժամանակահատվածում՝ ունենալով մինչև 3 ամիս տևողություն[7]:*

Օքսֆորդի համագործակցությունը ձեռնարկությունների և գործատու կազմակերպությունների հետ իրականացվում է բավականին հետաքրքիր ձևաչափով: Այստեղ ձևավորվել է կազմակերպությունների կադրերի հավաքագրմամբ զբաղվող մասնագետների խորհուրդ, որի հիմնական նպատակն է կազմակերպել քննարկումներ ընդհանուր հետաքրքրությունների շրջանակում գտնվող հարցերի շուրջ և անմիջական կապ հաստատել Օքսֆորդի ուսանողների և շրջանավարտների հետ: Այս համագործակցության շնորհիվ իրականացվում է նաև բուհի Կարիերայի ծառայությունների աշխատանքների ֆինանսական աջակցությունը[8]:

Նշված բուհերի կարիերայի ուղղորդման ռեսուրսների գործունեությունը հարուստ նյութ է ՀՀ բարձրագույն կրթական համակարգում կարիերայի ծառայությունների վերանայման և զարգացման համար: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ ձեռնարկությունների հետ արդյունավետ աշխատանքները և կարիերայի ուղղորդման խորքային աջակցությունը երիտասարդ մասնագետի կարիերայի խթանման գրավականն են: Իհարկե, երկրի տնտեսության ընդհանուր վիճակը չի կարող իր ազդեցությունը չունենալ նշված ոլորտի զարգացման վրա, սակայն միանշանակ է, որ գրագետ և գործնական հմտություններով օժտված երիտասարդները կարող են իրենց

---

[7] http://www.careers.ox.ac.uk/about-the-internship-office/(25.05.2016)

[8] http://www.careers.ox.ac.uk/join-the-recruiters-group/(25.05.2016)

դրական ազդեցությունն ունենալ տնտեսական աճի ու աշխատաշուկայի իշխող իրավիճակի վրա: ՀՀ տարբեր բուհերում ներկայումս գործում են կարիերայի կենտրոններ կամ կարիերայի ուղղորդման այլ կառույցներ, որոնց գործունեության արդյունավետության համար անհրաժեշտ է վերապատրաստել կամ աշխատանքի ընդունել համապատասխան որակավորում և հմտություններ ունեցող աշխատակիցների, ստեղծել ինթերնշիփերի և խորհրդատվությունների իրականացման տարբեր մեխանիզմներ, անմիջական կապ ապահովել ուսանողների և արդեն իսկ կայացած շրջանավարտների միջև՝ փորձի փոխանակման և մասնագիտական ուղու մարտահրավերների վերաբերյալ հիմնավոր պատկերացում կազմելու համար: Այս աշխատանքների իրականացման հարցում, հատկապես տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման մեր դարաշրջանում, հսկայական տեղ ունեն էլեկտրոնային ռեսուրսները, որոնք հասանելի են դարձնում յուրաքանչյուր տեղեկատվություն և, իհարկե, փոխադարձ կապի արագ ապահովման աշխատանքային կարևոր գործիք են:

Շատ կարևոր է ձեռնարկությունների ներկայացուցիչների ներգրավումը նշված գործընթացում: Իսկ փոխգործակցության կանոնավոր միջավայրն ամբողջությամբ կփոխի ի կադրային քաղաքականությունը: Հարկ է նշել, որ գործատուները պետք է կարևորեն երիտասարդ մասնագետների պատրաստման հարցում իրենց ներդրումը, մասնակցեն կրթական ծրագրերի մշակման և դասավանդման գործընթացներին, ծանոթացնեն ոլորտի անընդհատ փոփոխվող պահանջներին, կազմակերպեն ուսանողների գործնական հմտությունների զարգացմանը նպաստող միջոցառումներ (ինթերնշիփեր, մենթորշիփեր, էքսթերնշիփեր): Այսինքն՝ անհրաժեշտ է փոխել բուհ-ձեռնարկություն համագործակցության ողջ մշակույթը: Իսկ բուհերի ղեկավարներն իրենց հերթին պետք է լինեն ավելի ճկուն և պահպանողական չլինեն բարեփոխումների նկատմամբ: Անհրաժեշտ է վերանայել նաև գործնական աշխատանքների իրականացման գործընթացը: Կարծում եմ՝ խորհրդային ժամանակաշրջանում լայն տարածում ունեցող ուսումնաարտադրական պրակտիկաներն իրենց վաղուց սպառել են: Պետք է վերանայվի ողջ համակարգը, ինչպես նաև մշակվի ժամանակակից առաջատար բուհերում ընդունված ինթերնշիփերի ավելի ճկուն համակարգ: Այս աշխատանքներում պետք է ներգրավված լինեն պետական սեկտորի ներկայացուցիչներ, ոլորտային տարբեր միություններ, հայտնի փորձագետներ և մասնագետներ:

Ուսումնասիրելով միջազգային փորձը՝ կարող ենք փաստել, որ երիտասարդ մասնագետների կարիերայի աջակցման հարցում հավասարապես կարևորվում է ինչպես բուհը, այնպես էլ ձեռնարկությունը: Առանց գործընկերային միջավայրի ստեղծման, համատեղ շահերից բխող քննարկումների և դրանցից բխող քայլերի՝ նշված ոլորտը զարգացում և հեռանկար չունի: Իսկ աշխատանքների հետևողական կազմակերպումը կնպաստի երիտասարդության շրջանում գործազրկության և

արտագաղթի տոկոսների նվազմանը, որն էլ, բնականաբար, ռազմավարական նշանակություն ունի մեր երկրի ապագայի համար:

ОПЫТ ЗАПАДНЫХ СТРАН В ПРОФЕССИОНАЛЬНОЙ ОРИЕНТАЦИИ В СФЕРЕ КАРЬЕРЫ И ЕГО ПРИМЕНЕНИЕ В ВУЗАХ РА

АКОПЯН Л. Т.

Резюме

Статистические данные последних лет показывают рост темпов безработицы и высокий уровень эмиграции из страны. В этой связи необходимо реформировать сферу услуг, поддерживающую развитие карьеры и предлагаемую высшими учебными заведениями. Изучение международного опыта может послужить положительным импульсом для развития данной сферы. Необходимо активно сотрудничать с предприятиями, развивать электронные ресурсы, пересмотреть механизмы приобретения практических навыков и знаний студентов.

THE EXPERIENCE OF THE WESTERN COUNTRIES IN THE FIELD OF CAREER GUIDANCE SERVICES AND ITS APPLICATION IN THE HIGHER EDUCATION INSTITUTIONS OF THE RA

L. HAKOBYAN

Abstract

The statistical data of recent years shows the rising rate of the unemployment and high rates of emigration from the country. These indicators are the impetus for the immediate reformation. There is also a need to reform the career support services, offered by the higher education institutions. The study of the international experience can serve as a positive signal for the development of the field. It is necessary to cooperate intensively with the enterprises, to develop the electronic resources, to review the mechanisms for the acquisition of practical skills and knowledge of students.